Հատուկտորների և խորենացու պատմութեան մէջ «չօշափման չատ քիչ կէտերի է հանդիպել» պրոֆէսօր Կարրիէր, բայց և այնպէս յարգելի բանասէրը չէ կասկածում, որ այս հատուկտորների հեղինակ Մարիբաս քաղդէացին նոյն է խորենացու յիշած հռչակաւոր «Մարաբաս Կատինայ ասօրի» աղբիւրին հետ, որով այլ ևս տարակոյս չէ մնում, թէ «Մ. խորենացու ժամանակ կար Մարաբասի մի ժամանակագրութիւն, որ քիչ չատ համաբաւ ունենալու էր»:

Պրոֆէսօր Կարրէր խոստանում է այս խնդրի մասին չուտով աւելի հիմնական կերպով խօսել: Ամեն մի հայ բանասէր, անչուչտ անհամբերութեամբ կը սպասէ յարգելի գիտնականի ուսումնասիրութեան, քանի որ Նրա այժմեան, առժամանակեայ, Եզրակացութիւնները, առանց յաղուրդ տալու Նրանց հետաքրքրութեան՝ ընդհակառակն ծագեցնում են մի չարք դժուար լուծելի խնդիրներ:

Այս խնդրի մասին մենք ուրիշ անգամ աւելի մանրամասն կը խօսենք՝ երբ պրոֆէսօր Կարրիէրի ուսումնասիրութիւնը լոյս տեսնէ:

Ստ. Մ.

ՆԱՄԱԿ ԲԱԳԴՈՒԻՑ

Յունվարի 4 ին

Անցած կիրակի այստեղ ծխականների ժողով էր գումարված: Զը նայելով ձիւնախառն անձրևին՝ բաւական բազմութիւն էր ժողովված. ուշադրութեան արժանի մի երևոյթ, որ անցեալում—նոյն իսկ աւելի նպաստաւոր, եղանակներին, տեղի չէր ունենում: Ծխականների այդ զգալի հետաքրքրութիւնը պէտք է բացատրել երէցփոխ պ. Հ. Մէլիքեանի ձեռնարկած մի չարք խնդիրներով: Վերջինս՝ երէցփոխի պատասխանատու պաշտօնը ստանձնելու օրից մինչև այժմ, ոչ միայն եռանդով տարել է գործը, այլ իր արդիւնաւոր գործունէութեամբ գրաւել է և ծխականների համակրութիւնը: Վերջին ժողովին մասնակցում էին՝ անխտիր ամեն խաւի մարդիկ՝ և հարուստ կապիտալիստներ, և ոչ կապիտալիստ ինտելիգէնտներ, և՝ արհեստաւորներ, և՝ օրեկան աշխատանքով ապրող բանւորներ: Այս և այն դասակարգին առաւելութիւն չէր տրված, ինչպէս տրվում է չատ անգամ...

Ժողովի խորհրդածութեան նիւթն էր Ս. Աստուածածին եկեղեցու գաւթում եկեղեցական դպրոց բանալու խնդիրը: Մինչև համախոսական կազմելը՝ վիճաբանութեան նիւթ դարձաւ մի չատ կարեոր հարց, թէ եկեղեցու գաւթում կամ եկեղեցուն կից—ուր թոյլատրվում է եկեղեցական դպրոցներ ունենալ—ինչպէս պէտք է հասկանալ, արդեօք եկեղեցու բուն գաւթում, թէ եկեղեցական որ և է շինութեան մէջ: Անհրաժեշտ է այս հարցը պարզել, որովհետև կան չատ ազահով եկեղեցիներ, որոնք ամենայն հեշտութեամբ կարող են եկեղեցական դպրոցներ ունենալ, բայց յարմարաւոր շինութիւններ չունեն: Կան նոյն իսկ այնպիսի եկեղեցիներ, որոնք ունեն սեփական շինութիւններ, բայց եկեղեցու գաւթից դուրս. մինթէ այդ տեսակ եկեղեցապատկան շինութիւններում նոյնպէս չը պիտի դպրոցներ ունենալ լոկ այն պատճառով, որ անմիջապէս գաւթում չեն գտնվում: Տրամաբանօրէն դատելով՝ եկեղեցական դպրոցները պէտք է պանդանվեն եկեղեցական արդիւնքներով: Սեփական շինութիւն, կամ պարապատի ուսուցիչ կայ թէ չէ, այդ, պէտք է կարծել, երկրորդական խնդիրներ են, որ չեն վերաբերում ոչ ծրագրին, ոչ արտօնութեան, և ոչ իրաւունքին: Այսպէս թէ այնպէս, օր առաջ պէտք է լուծել այս խնդիրը և թիւրիմացութիւնների առաջն առնել:

Այդ նոյն ժողովում հարց յարուցվեց խորէն եպիսկոպոս Ստեփանէի ապրուստի ծախսերը հոգալու մասին: Վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեան համաձայն, խորէն սրբազանի ապրուստի ծախսերը ժամանակաւորապէս, մինչև թեմական դպրոցի բացվելը, պիտի հոգացվի եկեղեցու եկամուտներից: Երէցփոխ պ. Մէլիքեան ծխականների իրաւունքը յարգելով, փոխանակ իր հայեցողութեամբ այդ ծախսերը հոգալու, բարեաք համարեց ծխականների գիտութեամբ ու որոշմամբ ամսական ռոճիկ որոշել: Ժողովը ռոճիկի քանակութիւն որոշելը թողեց երէցփոխի կամքին: Վերջինը առաջարկեց 250 րուբլի: Ժողովականների մի փոքր մասը ցանկացաւ իջեցնել 200 ի: Տեղի ունեցան թեր և դէմ պատճառաբանութիւններ: Հարցը ենթարկվեց քուէարկութեան, և ձայների ահագին մեծամասնութեամբ վճռվեց՝ վճարել խորէն եպիսկոպոսին ամսական 250 րուբլի ռոճիկ:

Թէ այդ վճռին մասնակցողը և թէ ընդհանրապէս ծխականների այդ ժողովին ներկայ եղողը անկարող է զգուանը չարտայայտել Թիֆլիսի անարդ թերթերից մէկում այս մասին լոյս տեսած եզուիտական նկատողութիւնների դէմ: Ոչինչ հիմք չը գտնելով օրինաւորութեան դէմ վայրահաչութիւններ անելու՝ եզուիտական թերթը ամենատոր միտումներով գրգռում է հոգեոր բարձրագոյն իշխանութեան ուշադրութիւնը... Եւ ինչու համար,—Նրա համար, որ ծխականները գործ են դնում իրանց իրաւունքը, և կամենում են ըստ արժանոյն վարձատրել «արժանաւոր» հովիւներին...

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

Յունվարի 3-ին

Շտապում ենք մեր ձայնն էլ խառնել աշխարհը զբաղեցնող տարաբաղդ թիւրքահայ գաղթականի ցաւալի վիճակի առիթով լսվող ողբերին: Սգաւոր հալածվածին սիրում են համարեա ամեն մի անկիւնում, ուր հասել է Նրա կրած զրկանքների ձայնը, ուր դրվել է Նրա չարատանջ ոտքը: Բայց հարցրէք, թէ ինչ են անում 25—30 հազար բնակիչ ունեցող հայաբնակ Ալէքսանդրօպօլում:

Մեր ձեռքը առաջ չէ գնում պատմական այս ծանր բօսէներում հայրենի քաղաքի արարքը արձանագրելու, բայց մեզ համար ճշմարտութիւն թաղցնելը աւելի ծանր յանցանք է: Եւ ինչպէս չասել ամբողջ աշխարհին, թէ Ալէքսանդրապօլում ապաստանած 25 ընտանիք (թւով 150 հոգի) հայ գաղթականները այնքան ողորմելի դրութեան մէջ են գտնվում, որ նմանը դժուար թէ մի ուրիշ տեղ գտնէք: Ալէքսանդրապօլցի ինտելիգէնտը ոչ մի կերպ չը բարեհաճեց նրա վիճակով հետաքրքրվելու. ձեռնտաս երիտասարդը չը բացեց նրա նկուղի անչուք դուռը. հայ օրիորդն ու կինը չուզեցան իմանալ, թէ իրանց արիւնակից մերկամարմին կինը ինչ է հագնում, կամ ինչ է ուտում: Կօպէկ պայտող «ճարպոտ» փիղը իր տաք սենեակից չուզեց տեսնել անգամ ողորմութիւն աղերսող մարդու չորացած ձեռքը... Եւ այսպէս յանուն մարդկային գաղափարների տանջվող գաղթականը մնաց անօթի, մնաց անսփոփանք այն օրերում, երբ ամբողջ աշխարհը ասնում է գաղափարի համար տանջվողի յիշատակը: Իսկ ինչ է անում մեր Բարեգործական ընկերութեան տեղական վարչութիւնը,—ոչինչ: Նա զբաղված է ուրիշ գործերով... անձնական հաշիներ կան մէջտեղը: Երկու օր առաջ վարչութեան անդամների մէկի հետ անցնում էինք փողոցով. Նրան մօտեցաւ ցնցոտիների մէջ փաթաթված մի ծերունի և արցունքն աչքերին սկսեց աղերսել. «Աղա, ճար մը ըրէք, ինա հոտ ըսպանեց մըզիկ, ճըզերս ջարդըլաւ»: Ընթերցող, գիտէք ինչ հոտի մասին է խօսքը: Կարող էք երևակայել, թէ որտեղ է ապրում հարստահարված աշխարհի տարաբաղդ զաւակը: Նրա բնակարանի անունը մենք չենք ասյ. դուք ինքներդ գուցէ կը հասկանաք... խօսակիցը անորոշ պատասխաններ տուեց դժբաղդին, որը գլուխը ծռած, ձեռքերը ծոցին, հեռացաւ գնաց: Ուղեկիցս զանգատվեց այս տարվայ վարչութեան անհոգութեան մասին, և աւելացրեց թէ՝ «Կենտրոնական վարչութեան կողմից մեզ գրված է անգամ, եթէ փող ունէք տուէք, եթէ չունէք, գրեցէք մեզ. իսկ մենք ոչ ունենք, ոչ գրում ենք»:

Վերջացնում ենք մեր խօսքը: Դժբաղդ դէպքերի արձանագրութիւնը մեզ չատ հեռու կը տանի: Սպասելով չուտափոյթ օգնութեան՝ «Մշակի» խմբագրութեան և հայոց Բարեգործական ընկերութեան կենտրոնական վարչութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում այս անմխիթար երևոյթի վրա, աղաչելով չատալ օգնութեան ձեռք կարկառել՝ անտուն քաղցածին մի տաք անկիւն և կտոր չոր հաց հասցնելու:

Պ. Մ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յունվարի 5-ին

Երէկ, յունվարի 4 ին, խանդամիրեանցի թատրոնական դահլիճում, մեր թեմի կառավարիչ Սաթունեան վարդապետը՝ թեմական դպրոցի տեսուչ Մեսրովբ վարդապետի հետ՝ կատարեցին մաղթանք, քաղաքային ինքնավարութիւն մտցնելու առիթով: Հանդիսին ներկայ էին գաւառապետը, նորընտիր քաղաքագլուխը, անդամները, մօտ 20 ձայնաւորներ և մի քանի կողմնակի անձնաւորութիւններ: Խօսեցին հայր Սաթունեան, գաւառապետը և Քալանթարեան: Կանոնաւոր նիստեր տեղի կունենան յունվարի 23-ից. քնարկման վարված է նախկին Մարիամեան հայոց օրիորդական ուսումնարանը...

Ամսիս 3-ին թեմական դպրոցում նոյն դպրոցի սանները տուին մի մանկական երեկոյթ:

Ամսիս 6-ին խանդամիրեանցի թատրոնում լինելու է տօնածառ յօգուտ Մարիինսկի օրիորդաց դպրոցի աղքատ սանուհիների:

Գաղթականների թիւը այստեղ հասնում է 25-ի:

Շնորհաւորում ենք «Մշակ» լրագրի գոյութեան 25-րդ տարեշրջանը. ցանկանում ենք ի սրտէ նոյն ուղղութեամբ առաջ ընթանալու և բոլորելու ոսկեայ կէսդարեայ շրջանը:

Արցախեցի

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր խմբագրութիւնը յայտնում է իր ջերմ շնորհակալութիւնը այն անձանց, որոնք թէ հեռագիրներով և թէ նամակներով շնորհաւորեցին «Մշակի» 25 րդ տարեշրջանը, յայտնելով իրանց համակրութիւնը «Մշակի» գործունէութեան և ուղղութեան համար:

—

Նիւ-Եորկում հրատարակվող մի լրագիր հրատէր է կարդում՝ կազմել Ամերիկա գաղթած բոլոր հայ գաղթականների մատրամանց ցուցակը: Լրագիրը խոստանում է տպագրել գաղթականների թվի վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները:

—

Կովկասի նոր կառավարչապետ իշխան Գոլիցին, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, պէտք է մնայ Պետերբուրգում մինչև փետրվար ամսի վերջը՝ մասնակցելու համար պետական խորհրդի այն նիստերին, ուր պէտք է քննվեն Կովկասին վերաբերեալ մի քանի օրէնսդրութիւնների ծրագիրներ: «Лучъ» լրագիրը աւելացնում է, որ իշխան Գոլիցին, Թիֆլիս գալով, գարնանը պէտք է այցելի իր կառավարութեան յանձնված երկրի զանազան կողմերը:

—

«Արարատի» վերջին համարում կարդում ենք. «Վեհափառ Հայրապետը տեղեկանալով, թէ դեկտեմբերի 18-ին լրանալու է Պետերբուրգի Միտրոպոլիտ Ամեն. Տ. Պալլադիոսի եպիսկոպոսութեան երեսնամեայ յոբելեանը, նոյն օրը հեռագրով շնորհաւորեց, որին ի պատասխան ս. Միտրոպոլիտը յայտնեց իր սրտեռանդն շնորհակալիքը»:

—

Մենք ստացանք հետեւեալ նամակը Ախալքալաքից. «Քաղցր պարտք եմ զգում ողջունելու «Մշակի» փառաւոր գործունէութեան 25-րդ տարեմուտը: Ի դէպ. չատերին թւում է, թէ «Մշակը» լրացնում է իր 25-րդ տարին և մտնում է 26-րդը. այն ինչ 1896 թուին «Մշակի» ճակատին տպագրվում էր «քսանչորսերորդ տարի»: Ահա ինչից է առաջացել այդ, գուցէ թիւր, կարծիքը: «Մշակ» սկսվել է հրատարակվել 1872 թվի յունվարի 1-ից. այս թիւը դուրս գալով 1897-ից, կը ստացվի 25. ուրեմն ներկայ 1897 թվի յունվարին լրանում է 25-րդ տարին և սկսվում է 26-րդը: Կարելի է խմբագրութիւնը չէ հաշուում «Մշակի» չը հրատարակված մի տարին: Ցանկալի է պարզել այս փոքրիկ թիւրիմացութիւնը»: Այդ առիթով պարտք ենք համարում ասել հետեւեալը. Ներկայ թվի յունվարի 1-ին չէ լրանում «Մշակի» 25-ամեակը, այլ միայն սկսվում է 25-րդ տարեշրջան: «Մշակի» 25-ամեակը կը լրանայ 1898 թվի յունվարի 1-ին: Դրա պատճառն այն է, որ թէև «Մշակը» սկսվել է հրատարակվել 1872 թվին, բայց չէ հաշուում մի տարին, այն է 1885 թւականը, երբ «Մշակը» դադարել էր և լոյս չէր տեսնում:

—

Յունվարի 7-ից հեռագրում են Պետերբուրգից «Тифлисскій Листокъ» լրագրին, որ «Петерб. Вѣдомости» լրագրի խմբագրութիւնը մի քանի օրում ստացել է 4000 բուբլուց աւել նուէրներ հայ գաղթականների օգտին:

—

Շնորհակալութեամբ ստացանք Էջմիածնից, կաթողիկոսական դիւանից, երկու «օրացոյց» հետեւեալ նամակով. «Ըստ բարձր հրամանի Վեհափառ Հայրապետի ազգիս՝ Դիւանս ընդ ամին յարգանօք առաքէ առ խմբագրութիւն ձեր 2 օրինակ «Օրացոյց» 1897 ամի, ի կողմանէ Նորին ս. Օծութեան՝ ի շնորհաւորութիւն նոր տարւոյ»:

—

Յունվարի 5-ին, Թիֆլիսում, Անդրէեվսկայա փողոցի վրա, իր սեփական տանը, սպանվեց այրի տիկին Վասիլէ Ամիրեան: Երեկոյեան տիկինը գնացած է լինում թատրոնում մէջ ամբողջ գիշերը ոչ մի աղմուկ տեղի չէ ունեցել. միայն առաւօտը, աղախինը մտնելով իր տիկնոջ ննջարանը, գտնում է Նրան մեռած, և ընկած անկողնի վրա, գիշերային չորերով: Առ այժմ բռնված է միայն ծառան: Ենթադրում էին սկզբում, որ սպանութիւնը կատարված է կողոպտելու նպատակով, մանաւանդ որ տիկին Ամիրեան բաւական հարուստ էր համարվում, սակայն առիթներ կան կարծելու, որ այդ գազանային սպանութեան պատճառը աւելի սիրային արկածն է, քան որ և է գողութիւն: Գործը քննվում է:

—

Երեքշաբթի, ամսիս 7-ին, արքունական թատրոնում տեղի ունեցաւ «Կարմեն» օպերայի ներկայացումը, տիկին Սիմենբերգի բենէֆիսին: Կարմենի դերի մէջ Սիմենբերգ ցոյց տուեց իր արտիստական բոլոր ընդունակութիւնները: Շնորհալի չարժուածքները, ազնիւ խաղը և այն տեսարաններում, ուր նա չէ երգում, տրամադրութեան փոփոխութեան արտայայտութիւնները կենտրոնացնում էին երգչուհու վրա հասարակութեան ուշադրութիւնը: Գեղեցիկ էր տիկին Մարչոդ Միքայէլայի դերում. նա աջողութեամբ ներկայացրեց հասարակ գիւղական աղջկայ համեստութեան մէջ սիրող սրտի ուժեղ զգացմունքները: Երգիչ Մակսակով տրօվաղօրի դերը կատարեց աջողութեամբ:

—

Մեզ խնդրում են յայտնել, որ իշխանուհի Մարիամ Թումանեանի և իշխանուհի Սօֆիա Արղութեան - Երկայնաբազուկի նախաձեռնութեամբ, յունվարի 21-ին մի խումբ սիրողներ ներկայացում պէտք է տան յօգուտ Բարեգործական ընկերութեան, գաղթականներին օգնելու համար: Խաղալու են «Խանում» պիէսը և «Բժիշկը ընդունում է» վոդեվիլը:

—

Հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը յայտարարում է (տես 4-րդ երես), որ այսուհետև բժշկապետ Բ. Նաւասարդեան ձրիաբար բժշկելու է հիւանդ հայ գաղթականներին այն պայմանով, որ հարկաւոր դեղերը և կաղգուրիչ նիւթերը հայթայթէ ընկերութեան խորհուրդը: Մեզ մի քիչ զարմանալի է թւում այս յայտարարութիւնը. միթէ Թիֆլիսում գոյութիւն ունի, որ և է հայ բժիշկ, որ գաղթականներին, զիմած ժամանակ, ձրիաբար չը բժշկէր: Այդպիսի բժիշկ չէ կարող լինել, և եթէ կայ, ցանկալի է իմանալ Նրա ախտուր անունը: Բայց դրանից մեզ յայտնի է, որ դեռ սրանից չատ առաջ, նոյն իսկ գաղթականների հոսանքի ընկղումում, բժիշկ Կ. Ստեփանեանը ոչ միայն յանձն է առել ձրիաբար բժշկել հիւանդներին, այլ և ձրիաբար դեղեր էր մատակարարում և այժմ ևս չարունակ մատակարարում է նրանց: Ինչի ուրեմն Բարեգործական ընկերութեան խորհուրդը այդ մասին ոչինչ չէ յայտարարում:

—

«Новости» լրագրին հաղորդում են, որ մտադրութիւն կայ զօրեղացնել հարկային տեսչութիւնը Անդրկովկասեան երկրում:

—

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ հեռագրում են յունվարի 4-ից. «Երևանից հաղորդված լուրը մի պսակի թոյլտուութեան մասին, այստեղի փոխանորդի ձեռքով,—ճիշդ չէ: Առ այժմ այդ պսակը արգելված է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մի քանի ժամանակ առաջ աւստրիական նաւային Լլոյդ ընկերութեան շոգենաւը ցամաք էր հանել, Բոգոս կղզու վրա, հայերին, որտեղից նրանց ուղարկեցին Կրետէ։ Հայերի վիճակը ահիթ եղաւ պաշտօնական հարցասնդման։ Թիւրքիան նորերս բացատրեց, որ հայերի վրա ոչ մի ոյժ չեն գործադրել, այլ խօսել են քաղցրութեամբ և համոզելով։ «Daily News» լրագրի Հռոմի թղթակիցը Բոգոսից ստացած տեղեկութիւնների հիման վրա ասում է, որ այդ հայերին բռնի ցամաք են դուրս հանել և կոտորել։ Ահա ձեզ քաղցրութեամբ և համոզելով խօսքերի «թիւրքական» նշանակութիւնը։

—

Տրիպոլիսից հեռագրում են Բէյտերի գործակալութեան, թէ այնտեղի նահանգապետ Նամիր բէյ ստացաւ սուլթանից հրաման՝ արձակելու բանտից հայերին և ուրիշ քաղաքական յանցաւորներին։ Սակայն նահանգապետի համար այդ հրամանը այնքան յանկարծակի էր, որ նա չը վստահացաւ կատարել լիովին և արձակեց միայն հինգ հոգու։

—

Տիկին Սոմերսետ ստացել է Վարնայի փոխհիւպատոս Բրոֆիից հետևեալ նամակը.

«Յարգելի տիկին. Լսելով պ. Բելլօուից, որ Վանի, Խարբերդի և Ասիական Թիւրքիայի զանազան տեղերի հայերը մեծ կարօտութիւն ունեն, պ. Ադամս կարգադրեց, որ ձեր և «Բարեկամների Ընկերութեան» ուղարկած հագուստեղէնը ուղարկվի այն տեղերի կարօտեալներին։ Ես այդ մասին հեռագրեցի Կ. Պոլիս, Մեսաժերի Մարիթիմ ընկերութեան, որ 91 հակ ապրանքը ուղարկվի Սիդոն»։

Բրոֆի

—

Բ. Դուռը մի շրջաբերականով յայտնել է Կ. Պոլիս դեսպաններին, որ արտասահմանից հայրենիք վերադառնալ ցանկացող հայերը պէտք է իրանց անցաթղթերը ներկայացնեն այն քաղաքի և տեղի օսմանեան հիւպատոսներին, որտեղից նրանք վերադառնում են. այլապէս նրանց թոյլ չի տրվի մտնել օսմանեան հողը։

—

Բէյտերի գործակալութիւնը հեռագրում է յունվարի 4-ից. «Կ. Պոլիս լուր է հասել Հալեպից, որ այն հայ պաշտօնեան, որ նշանակված էր Զարվանջաղի գայմագամի օգնական, Պետրոս էֆէնդի անունով, գալուց երկու օր յետոյ սպանվեց։ Մանրամասնութիւնները դեռ չը կան։ Պէտք է նկատել, որ Պետրոս էֆէնդին չէր ցանկանում այդ պաշտօնը ստանձնել և նրան նշանակեցին նրա կամքի հակառակ։»

—

Կ. Պոլսի եւրոպական դեսպանատները յունվարի 4-ին նկատողութիւններ արին Բ. Դրան անիսթիայի գործադրութեան եղանակի մասին։ Թիւրքայ կառավարութիւնը սկսել էր գաւառներ ուղարկել այն հայերին, որոնք ընիկ փոքրասիացի են։ Դեսպանատները բողոքեցին այդ քանի դէմ, առարկելով, որ դա հակառակ է ներման մասին հրատարակված թղթի ոգուն, և պահանջում են դադարեցնել հայերին քշելը։

—

Կ. Պոլսից հաղորդում են եւրոպական լրագիրներին. «Ի նկատի ունենալով հայ յեղափոխական կոմիտէի թշնամական գործողութիւնը, նշանաւոր հայերը խորհրդակցութիւն կազմեցին, որին մասնակցում էին և Օրմանեան պատրիարքը ու Արթին փաշա Ցատեան։ Նրանք որոշեցին Եւրոպա ուղարկել Երուսաղէմի պատրիարքի փոխանորդ Երիցեանին, որ ընդհանուր յարգանք է վայելում (՞), խնդրելու այնտեղի հայ կոմիտէներին ամբողջ հայ ազգի կողմից՝ չը դիմել նոր յարձակումների, որոնք կարող են միայն վերջնականապէս ոչնչացնել հայերին։»

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՐԻԶ, 3 յունվարի։ Սենատի նախագահ նորից ընտրվեց Լուբէ 205 ձայնով։

ԼՕՆԴՕՆ, 3 յունվարի։ «Բէյտերի գործակալութեան» ազէնտը Բոմբէյում հեռագրով ուղարկել է հաչիւ ժանտախտի կատարած աւերմունքների մասին։ Առհասարը կանգնած է. ազգաբնակութիւնը փախուստի մէջն է որտեղում իր փրկութիւնը. դատարանները փակված են, ընակիչները հրաժարվում են թաղել փողոցում ընկած դիակները։ Մինչև այժմ ժանտախտը խընայում է թէ եւրոպացիներին և թէ չեվանտացիներին։ Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ երեկվան թւից հիւանդացել են 3,394, մեռել են 2,356 հոգի։ Ժանտախտը երևացել է նոյնպէս Պունախում։

ԼՕՆԴՕՆ, 3 յունվարի։ «Times» լրագիրը հեռագիր է ստացել Կրետէից, որից երևում է, որ խառնակութիւնները և սպանութիւնները, նոյնպէս և զրդռումն երկու կողմերիցն ևս, սաստկանում են, և թէ թիւրք զիւղացիները փոխադրվում են ամրացած քաղաքները։

Կ. ՊՕԼԻՍ, 4 յունվարի։ Լուր է սրտում, որ նշանակվելու են երկու գերմանացի, մի չվեյցարացի և մի բէլգիացի՝ ֆինանսների մինիստրութեան և ժանդարմների վարչութեան խորհրդականներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 յունվարի։ Բարձրագոյն հրաման։ Արտաքին գործերի մինիստրութեան աւագ խորհրդական հօֆմէյստէր կոմս Լամզդորֆ արտաքին գործերի մինիստրի օգնական է նշանակվում։

Ներքին գործերի մինիստրի կարգադրութիւն. ի նկատի ունենալով «Լուչ» լրագրի վնասակար ուղղութիւնը, ներքին գործերի մինիստրը որոշեց. յայտնել այդ լրագրին առաջին նախազգուշութիւն, յանձին նրա հրատարակչի, Պետերբուրգի վաճառական Ալէքսանդր Վոլֆի, և ժամանակաւոր խմբագրի՝ ազնուական Վլադիմիր Զոյկոյի, նոյնպէս և արգելել «Լուչ» լրագրի հատով վաճառելը։

Ներքին գործերի մինիստրը որոշեց արգելել «Утро» լրագրի հատով վաճառումը։

Կ. ՊՕԼԻՍ, 5 յունվարի։ Դիպլոմատիական շրջաններում այն կարծիքն է գերակշռում, որ Բ. Դրան ձեռք առած միջոցները ժանտախտի դէմ անբաւարար են և անհրաժեշտ է, որ պետութիւնները ձեռք առնեն լուրջ միջոցներ։

ԼՕՆԴՕՆ, 5 յունվարի։ «Times» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, որ ռուսաց և ֆրանսիական դեսպանների լուրջ առաջարկութիւնների պատճառով՝ Ֆուադ փաշայի աքսորի վերաբերմամբ, սուլթանը հրամայեց տալ Ֆուադին գաւառում մի ուրիշ պաշտօն, այնպիսին, որպիսին ինքը կը կամենայ յանձն առնել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 յունվարի։ Այսօր Ձմերային պալատի դահլիճներում տեղի ունեցաւ ջրօրհնէքի զօրահանդէսը, ապա ջրօրհնէքը Յորդանանում, Ձմերային պալատի հանդէպ։ Ներկայ էին Թագաւոր Կայսրը, Մեծ Իշխանները, զինուորական իշխանութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի։ Արքունական երկաթուղիների վարչութեան նախագահ Պավել Պետրովիչ Վասիլէվսկի վախճանվեց յունվարի 6-ին։

«Լուչ» լրագիրը դադարեց մինչև նոր խմբագիր հաստատելը։

ՖԻԼԻՊՊՈՊՕԼ, 7 յունվարի։ Կ. Պոլսից ստացված տեղեկութիւնների համեմատ, կղզիների բերդերում գտնվող թիւրք ազգութեան պատկանող բոլոր կալանաւորները, յաճախ փախչելու պատճառով, յետ են բերված Կ. Պոլիս։

ԼՕՆԴՕՆ, 7 յունվարի։ Վաղվան գահական ճառը պարլամենտի բացման ժամանակ՝ կը պարունակի սովորական յայտարարութիւններ արտաքին յարաբերութիւնների մասին։

ԲՈՄԲԷՅ, 7 յունվարի։ Պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ մինչև երէկվայ թիւը ժանտախտից հիւանդացել են 3636 հոգի։ մեռել են 2592 հոգի։ Դրութիւնը վատացաւ։ Ազգաբնակութիւնը շարունակում է փախչել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յունվարի։ Ժամանակաւորապէս դադարած «Լուչ» լրագրի բաժանորդները կը ստանան «Новости»։

Կ. ՊՕԼԻՍ, 8 յունվարի։ Պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է, որ սուլթանի ծննդեան օրը միայն թնդանօթաձգութիւն կը լինի։ Մի քանի դեսպաններ կրկնապատկեցին նաւաստիների թիւը՝ դեսպանատները պաշտպանելու համար, որովհետև սպասվում են անկարգութիւններ թիւրքերի կողմից։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունվարի 7-ին

Լոնդոնի վրա	10 ֆունտ արժէ. .	93 ր.	60 կ.
Բերլինի վրա	100 մարկ — . .	45 »	85 »
Պարիզի վրա	100 ֆրանկ — . .	37 »	22⅝ »
Ոսկի	— — արժէ . .	7 »	50 »
Մաքսային կուպոններ	— . .	149 »	— »
Բօրսային դիսկոնտ	— . .	5¾—7	— »
4% պետական բէնտա		99¼ »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.		287½ »	— »
— — երկրորդ —		260 »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		212½ »	— »
5% պետական երկաթուղ. բէնտա		— »	— »
4% ներքին փոխառութեան . . .		98¾	— »
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		101 »	— »
Ազն. կալ. պետ. բանկի խաղարկութ.		— »	— »
4½% վկայակ. զիւղ. հող. բանկի		101 »	—
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .		— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ ընկերութեան օբլիգացիաներ.		101½ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		101 »	— »
Օդէսայի — —		101¾ »	— »
Թիֆլիսի — —		98¾ »	— »
Թիֆլիսի կալ. բանկի 6%	— . .	102 »	— »
5% — —	— . .	99⅜ »	— »
Քութայիսի — —	— . .	102 »	— »
5% — —	— . .	99⅛ »	— »

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

—

ԵՐԵՒԱՆ. Հ. Եղիազարեան. Ձեր հերքումը ընդունեցինք մեր պարտքն է. բայց առանց փոփոխութեան, ինչպէս դուք էք կամենում, չի տպագրվի, որովհետև ձեր նամակի մէջ թղթակցի հասցէին ուղղված վիրաւորական խօսքերը բոլորովին հարցին չեն վերաբերվում։ Փաստական մասը ամբողջապէս կը տպագրենք, երբ յայտնէք ձեր համաձայնութիւնը։

ՄՕՍԿՎԱ. Յ. Թ. Ուսանողական դէպքերին վերաբերեալ ձեր յօդուածը անկարող ենք տպագրել։

ԹԻՖԼԻՍ. Դ. Տ.—Ղ. Ձեր յօդուածը «Միօրեայ ժողովրդագրութեան» մասին անկարող ենք տպագրել։ Այդ հարցի մասին առհասարակ ոչինչ չէ կարող տպագրվել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Բաթ. դուրս է գալիս 9 ժ. 40 ր. առ.	11 ժ. 20 ր. գէշ.
Թիֆլիս հասնում է 9 „ 55 „ եր.	12 „ 25 „ ցեր.
Թիֆլ. դուրս է գալիս 10 „ 50 „ „	1 „ 10 „ „
Բաղու հասնում է 4 „ 49 „ „	7 „ 30 „ առ.

—

Բաղուից դուրս է գալիս 2 ժ. 30 ր. ցեր.	11 ժ. 5 ր. գէշ.
Թիֆլիս հասնում է 8 „ 21 „ առ.	5 „ 50 „ եր.
Թիֆլ. դուրս է գալիս 9 „ 30 „ „	6 „ 50 „ „
Բաթում հասնում է 9 „ 45 „ եր.	8 „ 15 „ առ.

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

—

Հինգ հոգու համար		
Թիֆլիսից դուրս է գալիս	7 ժ. առ.	9 ժամ. առ.
Կիշերում է	Մլեռում	Պատանուը
Վլադիկավկազ հասնում է	6 ժ. երեկ.	8 ժ. երեկ.
Դեց հոգու համար (չեն գիշերում)		
Վլադիկավկազ դուրս է գալիս	9 ժ. 30 ր. առ.	7 ժ. 5„„ե.
Թիֆլիսից հասնում է	12 „ —ցերեկ	8 երկե. ..0

Կ. Հ. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ խորհուրդը յայտնում է ի գիտութիւն Թիւրքիայից փախած Հայ գաղթականների, որ բոլոր հիւանդ գաղթականները կարող են դիմել բժշկապետ Բագրատ Նաւասարդեանին, որ յանձն է առել ձրիաբար բժշկել նրանց, ամեն օր, բացի կիրակի օրերից, առաւօտեան ժամը 11—12-ին իր հիւանդանոցում, ինչպէս և յանձն է առել այցելելու՝ նոյնպէս ձրիաբար, տանը պառկած ծանր հիւանդներին։ (№ 3) 1—4

ԵՐԿՈՒ ՏՈՒՆ

երեք յարկանի, մի մեծ բաղով, դրաւ չը դրված, ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ։ Դիմել հետևեալ հասցէով, Լաբօրատօրնայա, № 9, ընակարան իշխան Բագրատիօնի, առաւօտեան 12—1 ժամը, երեկոյեան 5—7 ժամը։ (№ 3) 1—2

ԲԺԻՇԿ ԶԱՐԳԱՐԵԱՆՑ

Մոսկվայի կայսերական համալսարանի մանկաբուժական կլինիկայի նախկին օրդինատոր, ընդունում է միայն հիւանդ երեխաներին ամեն օր, ժամի 11½—1-ը։ Շաբաթ օրերը՝ ձրի։

Հասցէն՝ Ստարո-Ինստիտուտսկայա, տ. № 13. № 103 (չր.) 40—40

ՄԱՔՈՒՐ ԽԱՂՈՂԻ ԳԻՆՈՒՑ ՊԱՏՐԱՍՏԱԾ ՊԱՀՎԱԾ (выдержанный)

ՌՈՒՍԱԿԱՆ ԿՕՆԵԱԿ

Ն. Ա. ԹԱԻՐՕՎԻ ԵՒ ԸՆԿ.

Երևան քաղաքում։ Ծախվում է Մ. Նազարբէգովի պահեստում, Դվորցովայա փողոցի վրա, թատրոնի տակ, ԹԻՖԼԻՍ քաղաքում։

(№ 147) (ե. չ.) 4—6

ԴՕԿՏՕՐ ԱՍՎԱԴՈՒՐՕՎ

մշտապէս գտնվելով ՍԱՆ-ՐԵՄՕՈՒՄ (Իտալիա), առաջարկում է իր ծառայութիւնը ներքին հիւանդութիւն ունեցողներին. ընդունում է նաև պանսիօներ։

Հասցէն՝ ITALIA. San-Remo, № 19, Corso Garibaldi. (№ 35) 12—12

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եռաշխատելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետեսութեան։

Բ) Առևտրական թուաբանութիւն.

Գ) Առևտրական նամակագրութիւն.

Դ) Գեղագրութիւն և ամենաշատ ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքները սկսվելու են յունվարի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ Սադովայա փողոց, տուն Մարքարովի, № 27։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիղդէկելի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու։

(ե. հ.) (№ 141) 9—15

ՌԵՐՏԷ ԵՒ ԸՆԿ.

Առևտրական տունը (որը գոյութիւն ունի 1868 թվից) պատիւ ունի յայտնելու պ.պ. շերամապահներին, որ ԲԱՂԴԱԴԻ ՍՊԻՏԱԿ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԵՂԻՆ ԲՕՃՕՃԻՑ ՊԱՍՏԵՕՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ, ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՍԵՐՄԸ գնել ցանկացողները գնի և պայմանների մասին պէտք է դիմեն Կովկասի և Պարսկաստանի ներկայացուցիչ ԵՂԲ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՆԵՐԻՆ հետևեալ հասցէով՝ БАТУМЪ, Бр. Мнацаканянцъ.

(№ 146) (;) 5—12

ՄԵԾ ՄՈՍԿՈՎԵԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ
(Большая Московская Гостинница)

(ՐՈՍՏՈՎ ԴՈՆԻ ՎՐԱ)

Սրանով յայտարարվում է, որ Բոստովում, Մեծ Սադովայա փողոցի վրա, հայ աղքատների եկեղեցական հոգաբարձութեան պատկանող տան մէջ, բացել եմ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՀԻՒՐԱՆՈՑ և ՃԱՇԱՐԱՆ, ամեն տեսակ յարմարութիւններով. ծոխ և շքեղ կահ կարասիքով զարդարված են սենեակները և ելէքտրական լուսով լուսաւորված։ Կայ վեր բարձրանալու մեքենան, լողարան և բնակվողների համար պէտք եղած միւս բոլոր պարագաները, եւրոպական առաջնակարգ հիւրանոցների օրինակով։ Հիւրանոցը ունի մինչև անգամ թարգմաններ։ (№ 130) 9—16

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Января 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.